

«ՄԱՎ ՇԻՆ» ՍՊԸ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 144
ՏԵՂ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

«ՄԱՎ ՇԻՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

Ա. Հովհաննիսյան

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

Հապավումներ	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	6
3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ	7
4 ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
5 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	27
6 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	41
7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	49
8 ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ	52
9 ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	53
6 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	

Հապավումներ

ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
ԲԱՄ	Բողոքների արձանագրման մեխանիզմ
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ՍԱԲ	Սեյսմիկ անվտանգության բարելավում
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության Շինարարության Նորմեր
ՀՏԶՀ	Հայաստանի Տարածքային Չարգացման Հիմնադրամը
ՀՄԿ	Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն
ՇՆԿ	Շինարարական նորմեր ու կանոններ
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող 144 տեղ/հզորությամբ կրթահամալիրի կառուցում
Ծրագրի պատվիրատու	Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)
Ձեռնարկող	«ՄԱՎ ՇԻՆ» ՍՊԸ, ՀՎՀՀ 08911644
Ձեռնարկողի հասցե	ՀՀ Վայոց ձոր, գ. Զառիթափ
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ էլ փոստ և հեռախոս`	Հեռ.՝ +374 77929394
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի Արփի բնակավայրի 1-ի փողոցի 21 շենք հասցե
Կառուցապատվող տարածքի մակերեսը	2,21հա
Կառուցապատման մակերեսը	Մինչև 80 %,
Կրթահամալիրի նախագծային հզորությունը	144 աշակերտ

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում նախագծվող կրթահամալիրի կառուցումն իրականացվելու է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)-ի պատվերով:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվում է բնապահպանական ազդեցության գնահատում՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համաձայն: Համաձայն ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի (21 հունիս, 2014թ.) /խմբագրված 2023թ/ Հոդված 12, կետ 8) քաղաքաշինության բնագավառում՝ ա. քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով, կառուցապատման մակերես ունեցող քաղաքաշինության ոլորտի նախագծերը դասվում են «Բ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ հաշվետվություն) փաստաթղթի պատրաստում և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության իրականացում:

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում նախատեսվող 144 տեղ կրթահամալիրի կառուցապատումը համաձայն սույն օրենքի պահանջում է ՇՄԱԳ հաշվետվության մշակում և ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննության և համապատասխան պետական փորձաքննական եզրակացության ստացում:

2 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ (ՀՏԶՀ)-ի համար մշակվել է ՇՄԱԳ հաշվետվության փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատեղել ՀՀ օրենսդրական նորմերի և ԱԶԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՄԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցույց Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերում:

2.2 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և/կամ նվազեցմանն ուղղված անհրաժեշտ բնապահպանական մեղմացման միջոցառումները:

2.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվության կազմը

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գործընթացում դիտարկվող գործողությունները, շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը սահմանված են "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 14 կետերում:

2.4 Շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվության մեթոդաբանությունը

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվության մշակումն իրականացվել է ազգային օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև ԱԶԲ-ի-բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան: ՇՄԱԳ հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախագծվող կրթահամալիրի աշխատանքային նախագիծը,

- նախատեսվող գործունեության տեղանք կատարած այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- գտնվելու տեղանքի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները,
- ծրագրի իրականացման համար մշակված Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈԻՇ) փաստաթուղթը,
- ՀՀ օրենսդրության բնապահպանական և օրնսդրական կարգավորիչ շրջանակը
- ազդակակիր և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ՀՀ բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները,

ՀՀ Սահմանադրություն (2015). Հոդվածներ 10 սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև հոդված 8-ի համաձայն Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին:

ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014) (խմբագրված 2023թ) պահանջում է իրականացնել ծրագրերի բնապահպանական գնահատում, գնությունն ու ըստ կատեգորիաների դասակարգում կախված գործունեության ձևից, ինչպես նաև ենթարկել պետական փորձաքննության և ստանալ փորձաքննական եզրակացություն:

ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004) կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:

ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:

ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998)(Հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործնեության լիցենզավորման կազմը հաստատելու մասին> (2003), որը սահմանում է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Ջրային Օրենսգիրք

ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781, <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>>:

ՀՀ Կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն:

ՀՀ օրենքը ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ) «Մթնոլորտային օդի պահպանության մասին»-կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը:

Ուղեցույցներ և ստանդարտներ

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, 21.06.2014թ.
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք, 23.11.1999թ.,
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք, 03.04.2000թ.,
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշում,
- ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշում,
- ՀՀ կառավարության 2014 թ-ի հունիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 781-ն որոշում,
- Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշումը:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրում 1-ի փողոցի 21 շենք հասցեում կառուցվող 144 աշակերտի համար կրթահամալիրի տեղակայման նախագիծը իրականացվել է ըստ պատվիրատուի /Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի/ կոմից տրված տեխնիկական առաջադրանքի և համաձայն ՀՀՇՆ պահանջների:

Նախագծի համար հիմք են հանդիսացել համայնքի ղեկավարի կողմից 16.05.2024թ. տրված N 131 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, հողամասի կադաստրային վկայականն ու տարածքի գեոդեզիական հանույթը: Նախագծման ընթացքում հաշվի են առնվել պատվիրատուի պահանջներն ու առաջարկությունները:

Հողամասի նպատակային նշանակությունը նույնպես համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Արփի բնակավայրի կրթահամալիրի գյուղուն ունեցող երեք մասնաշենքերից երկուսը նախատեսվում է քանդել:

Կրթահամալիրը բաղկացած է երեք մասնաշենքերից՝ ճաշարանից և երկու երկհարկանի ուսումնական մասնաշենքերից:

Տարածքը ցանկապատված է: Տարածքում է գտնվում էլ.ենթակայանը:

Ապամոնտաժվող մասնաշենքերի համար տեղադրվում է մետաղաթիթեղից ժամանակավոր ցանկապատ 2.0մ բարձրությամբ և 5.0մ լայնությամբ դարպաս, քանի որ չքանդվող մասնաշենքում դասերը շարունակվելու են:

Մասնաշենքերի տանիքները քառաթև են, տանիքածածկերը մետաղաթիթեղներից է փայտե կոնստրուկցիաների վրա, ծածկերը հավաքովի ե/բետեն սալերից, պատերը՝ քարից և միջնորմերը 100 մմ հաստությամբ պեմզաբլոկներից: Պատերը՝ կրող են:

Ցանկապատի վրա տեղադրվում է ժամանակավոր լուսավորությունը և ցանկապատին ամրացվում է պաստառ համապատասխան գրություններով:

Հատակագծում նշված տեղերում տեղադրվում են վազոն-տնակներ աշխատողների համար:

Ապամոնտաժման աշխատանքներին խանգարող բոլոր կոմունիկացիոն գծերն անջատվում են նախապես: Համապատասխան տեղերից կանխավ անջատվում են մասնաշենքը սնուցող էլեկտրական լարերը:

Ապամոնտաժման աշխատանքների համար նախատեսվում է RDK-250 մակնիշի թրթուրավոր կռունկ 1 հատ, կողավոր ավտոմեքենա անցքավոր հավաքովի ե/բ սալերի տեղափոխման համար 1 հատ, ավտոինքնաթափ շինադրի տեղափոխման համար 1 հատ, բուլդոզեր և էքսկավատոր:

Ապամոնտաժման և քանդման աշխատանքները կատարվում են փուլերով:

1-ի փուլում ապամոնտաժվում են ճաշարանի և ուսումնական 2-րդ մասնաշենքի բոլոր ճաղաշարերը, դուռպատուհանները, ներսի սարքավորումները, կախովի առաստաղները և ներսը մաքրվում է կենցաղային ու շինարարական աղբից:

2-րդ փուլում պատրաստվելու է տախտակամած 2-րդ մասնաշենքի պարագծաով 1.0մ լայնությամբ, որը կատարում է նաև պաշտպանիչ դեր: Ապամոնտաժվում է ուսումնական 2րդ մասնաշենքիթիթեղյա տանիքածածկն ու փայտյա կոնստրուկցիան, որոնք արկղերով իջեցվում են ներքև թրթուրավոր կռունկի օգնությամբ, գտվում և տեղադրվում համապատասխան տեղերում: Մաքրվում է ծածկի մեկուսացման շերտերը, լցվում արկղերը կամ պարկերն ու թրթուրավոր կռունկի օգնությամբ իջեցվում ներքև, տեղափոխվում դարպասի մոտ նշված աղբակույտի տարածքում: Բացվում է հավաքովի ե/բ ծածկի սալերի արանքները, նախապես այն թեթևակի թրջելով, որ փոշի չառաջանա և զոդման միջոցով այն անջատվում է կապերից: Թրթուրավոր կռունկի ճոպանն ամրացվում է ծածկի սալերի համապատասխան մասերից ու հատհատ իջեցվում ներքև՝ հատակագծում նշված տարածքներում, որից հետո բարձրվում է կողավոր ավտոմեքենան և տեղափոխվում: Մեքենայից դուրս մնացած սալերի ծայրերում կապվում է կարմիր ժապավեն անվտանգության համար: Ձեռքի մեխանիզմով կտրտվում են միաձույլ ե/բ կապերն ու թափում հատակին:

Թափված շինադրը լցվում է արկղերն ու իջեցվում ներքև, որից հետո քանդվում են 2-րդ հարկի պատերը:

Պատերի վերևից հատվածհատված թրջելով, ձեռքի մեխանիզմով կարերը բացելուց հետո շարք-շարք, հատ-հատ քարերը հանվում իջեցվում են ներքև և դասավորվում համապատասխան տեղերում:

2րդ հարկի պատերն ապամոնտաժելուց հետո մաքրվում է հատակին թափված շինադր, լցվում արկղերը, իջեցվում ներքև ու տեղափոխվում դարպասի մոտ նշված աղբակույտի տարածքում:

2-րդ հարկի հատակը մաքրվում է փոշուց, որից հետո ապամոնտաժվում են 1-ի հարկի հավաքովի ե/բ ծածկի սալերը նույն հերթականությամբ ինչպես 2-րդ հարկինը: Պատրաստվում է տախտակամած նաև ներսի պատերի ու միջնորմերի համար և նույն ձևով հատ-

հատ քարերը հանվում ու տեղափոխվում են հատկացված տեղերը: Մաքրվում է հատակին թափված շինադրը, լցվում արկղերը, տեղափոխվում դարպասի մոտ նշված աղբակույտի տարածք:

Համապատասխան քանակությամբ շինադր կուտակելուց հետո բարձվում է ինքնաթափն ու տեղափոխվում:

Էքսկավատորով քանդվում է խարխիսն ու հիմքերը: Էքսկավատորով քանդվում է նաև այդ հատվածում 54.80մ երկարությամբ հենապատը: Քանդած շինանյութը գտվում է: Պիտանի շինանյութը տեղափոխվում է հատակագծում նշվար տեղը, իսկ շինադրը տեղափոխվում է աղբակույտ: Տվյալ տարածքը մաքրվում է շինադրից:

3-րդ փուլում պատրաստվում է տախտակամած ճաշարանի մասնաշենքի պարագծով:

Ապամոնտաժվում	է	ճաշարանի	մասնաշենքի	
թիթեղյա	տանիքածածկն	ու փայտյա	կոնստրուկցիան, որոնք	արկղերով
իջեցվում	են ներքև	թրթուրավոր	կռունկի	օգնությամբ,

գտվում և տեղադրվում համապատասխան տեղերում: Մաքրվում է ծածկի մեկուսացման շերտերը, լցվում արկղերը կամ պարկերն ու թրթուրավոր կռունկի օգնությամբ իջեցվում ներքև, տեղափոխվում դարպասի մոտ նշված աղբակույտի տարածքում: Բացվում է հավաքովի ե/բ ծածկի սալերի արանքները, նախապես այն թեթևակի թրջելով, որ փոշի չառաջանա և զոդման միջոցով այն անջատվում է կապերից: Թրթուրավոր կռունկի ճոպանն ամրացվում է ծածկի սալերի համապատասխան մասերից ու հատ-հատ իջեցվում ներքև՝ հատակագծում նշված տարածքներում, որից հետո բարձվում է կողավոր ավտոմեքենան և տեղափոխվում: Մեքենայից դուրս մնացած սալերի ծայրերում կապվում է կարմիր ժապավեն անվտանգության համար: Ձեռքի մեխանիզմով կտրտվում են միաձույլ ե/բ կապերն ու թափում հատակին: Թափված շինադրը լցվում է արկղերն ու տեղափոխվում դարպասի մոտ նշված աղբակույտի տարածք: Պատերի վերևից հատված-հատված թրջելով, ձեռքի մեխանիզմով կարերը բացելուց հետո շարք-շարք, հատ-հատ քարերը հանվում իջեցվում են ներքև և դասավորվում համապատասխան տեղերում: Այստեղ նույնպես պատրաստվում է տախտակամած նաև ներսի պատերի ու միջնորմերի համար և նույն ձևով հատ-հատ քարերը հանվում ու տեղափոխվում են հատկացված տեղերը: Մաքրվում է հատակին թափված շինադրը, լցվում արկղերը, տեղափոխվում դարպասի մոտ նշված աղբակույտի տարածք:

Համապատասխան քանակությամբ շինադր կուտակելուց հետո բարձվում է ինքնաթափն ու տեղափոխվում:

Էքսկավատորով քանդվում է խարիսխն ու հիմքերը: Քանդած շինանյութը գտվում է: Պիտանի շինանյութը տեղափոխվում է հատակագծում նշվար տեղը, իսկ շինադրը տեղափոխվում է աղբակույտ: Տվյալ տարածքը մաքրվում է շինադրից:

Աշխատանքներն ավարտելուց հետո ամբողջ տարածքը մաքրվում է շինարարական ու կենց աղային աղբից՝ բարձում ինքնաթափերն ու տեղափոխում: Տեղափոխվում են վազոն-տնակները, ապամոնտաժվում է ժամանակավոր լուսավորության համակարգն ու ժամանակավոր ցանկապատը:

Շինարարության համար անհրաժեշտ մեքենաների ու մեխանիզմների մակնիշներն ու տվյալները տրված են "Քանդման աշխատանքների համար պահանջվող մեքենաներ և մեխանիզմներ" ցանկում:

Աշխատանքների համար անհրաժեշտ ջուրը վերցվում է 1-ի մասնաշենքից, իսկ հոսանքը վերցվում է տարածքում գտնվող էլ.էնթակայանից համապատասխան առանձին հաշվիչներ տեղադրելով:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ

ՀՀ Կառավարման Որոշում՝ 15.01.2009թ. N 144-Ն

СНиП III-4-80* Москва 2000 г.

Ապամոնտաժման աշխատանքների ընթացքում բոլոր աշխատողները՝ բանվորները, ապամոնտաժումն ապահովող պատասխանատու անձը և հատկապես շին. մեխանիզմների հետ աշխատողները պետք է անթերի և մեծ պատասխանատվությամբ կատարեն անվտանգության բոլոր կանոնները: Ամեն դեպքում պետք է ուշադիր լինել և վթարի դեպքում անմիջապես կանգնեցնել աշխատանքները, վերացնել վթարը և հետո միայն շարունակել աշխատանքները:

Ապամոնտաժման աշխատանքներն հսկող պատասխանատուն աշխատանքային օրն սկսելուց առաջ ապամոնտաժումն իրականացնող բոլոր անձանց պետք նորից հիշեցնի անվտանգության կանոնները և նրանց պարտականություններն այդ կանոններն անթերի կատարելու համար, որն ապահովում է յուրաքանչյուրի անվտանգությունն ու ստուգի, որ բանվորները կրեն իրենց աշխատանքային բնույթին համապատասխան համազգեստ և անվտանգության պարագաներ՝ ռետինե ձեռնոցներ, ռետինե երկարաճիտ կոշիկներ, պաշտպանիչ գլխարկ, ակնոցներ, և բարձրության վրա աշխատողների համար ամրագոտիներ: Մեխանիզմների հետ աշխատողները պետք է ստուգեն իրենց մեխանիզմների, սարքավորումների, ճոպանների աշխատանքային վիճակը և թերության դեպքում այն պարտադիր նորոգեն, նոր միայն սկսեն աշխատանքները:

Այստեղ ամբողջ կոնստրուկցիայի ապամոնտաժումը բավականին վտանգավոր իրավիճակներ կարող է ստեղծել, դրա համար ապամոնտաժային աշխատանքների ժամանակ չի կարելի գտնվել այն մասում, ուր թրթուրավոր կռունկի ճոպանները բարձրացրած բեռով շարժվում են, դա խստիվ արգելվում է ըստ անվտանգության կանոնների, որը պետք է անվերապահորեն կատարել:

Ապամոնտաժված ծածկի սալերը կավտոմեքենաների վրա տեղադրելուց հետո կապերով ամրացվում են մեքենայից ու դուրս մնացած ծայրին կապում կարմիր ժապավեն:

Կռունկի աշխատանքի ժամանակ, երբ սլաքից ամրացված է բեռը, աշխատողները հեռանում են վտանգավոր գոտուց ու վերադառնում են նորից այդտեղ, երբ կռունկի սլաքը նորից սպասում է բեռնավորման: Կռունկի աշխատանքի վերջում կամ ընդմիջման ժամին սլաքից կախված բեռ չպետք է լինի: Մեխանիզմի շարժիչն անջատվում է միայն դատարկ սլաքի դեպքում:

Աշխատանքի վերջում կամ ընդմիջման ժամին բոլոր մեխանիզմների շարժիչները պետք է անջատված լինեն՝ բուլդոզերի թին, էքսկավատորի շերեփը պետք է դատարկ լինեն և գետնին կպած, ավտովերհանի օրոքոցը պետք է իջեցված լինի:

Կայծակի, անձրևի, կարկուտի, ուժեղ քամու դեպքում խստիվ արգելվում են բոլոր տեսակի աշխատանքները:

Բարձրության վրա աշխատելու համար օգտագործվում է նաև ավտովերհան, որտեղ կկարողանան կանգնել երկու աշխատող իրենց գործիքներով և ազատ շարժվել:

ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Վայոց ձորի մարզի Արփի բնակավայրի կրթահամալիրի գյուղյուն ունեցող երեք մասնաշենքերից երկուսի քանդման աշխատանքների նախագիծ:

Շենքի քանդման աշխատանքները տևողությունը որոշվում է համաձայն ՇՆԿ 1.04.03-85 նորմաներով էջ 201, կետ 28-ի:

$$6000 - 4790 / 6000 \times 100 = 20.17 \times 0.3 = 6.05$$

$$100 - 6.05 / 100 \times 12 = 11.27 \text{ ամիս}$$

Քանի որ հաշվարկները նորմատիվներում տրված է միայն կառուցման համար, ուստի կառուցման ժամանակացույցի տվյալներից ելնելով կարող ենք ստանալ քանդման ժամանակացույցը:

Այսպիսով քանդման ժամանակացույցը ընդունում ենք 7 ամիս:

Նախատեսվում է 20 աշխատող, այդ թվում են նաև անվտանգության պատասխանատուն, պահակը, շինմեխանիզմի և մեքենաների վարորդները:

Նախատեսվում են վագոն-տնակներ և աշխատողների համար:

Շինարարության ընթացքում բոլոր աշխատողները՝ բանվորները, շինարարության անվտանգությունն ապահովող պատասխանատու անձիք և, հատկապես շին, մեխանիզմների հետ աշխատողները պետք է անթերի և մեծ պատասխանատվությամբ կատարեն անվտանգության բոլոր կանոնները:

Ամեն դեպքում պետք է ուշադիր լինել, վթարի դեպքում անմիջապես կանգնեցնել աշխատանքները, վերացնել վթարը և միայն շարունակել աշխատանքները:

Շինարարական աղբի համար օգտագործվում է էքսկավատոր տրակտորի բազայով :

Էքսկավատորավարը աշխատանքները դադարեցնելուց հետո (ընդմիջման ժամին կամ աշխատանքի վերջում) պետք է շերեփն ու թին անպայման ցած իջեցնի, որոնք պետք է կպած լինեն գետնին և լինեն դատարկ :

Շինմենտաժային աշխատանքների ժամանակ չի կարելի գտնվել այն մասում, ուր թրթուրավոր վերամբարձի սլաքը բարձրացրած բեռով շարժվում է, դա խստիվ արգելվում է ըստ անվտանգության կանոնների, որը պետք է անվերապահորեն կատարել :

Խստիվ արգելվում է աշխատանքների դադարի ժամանակ վերամբարձից կախված բեռների առկայությունը : Բեռը ոչ մի դեպքում չի կարելի վերնում՝ ամբարձիչից կախված թողնել և անջատել մեխանիզմը :


Բեռի անկման վտանգավոր սահմանագիծը նշահարվում է փոքրիկ դրոշակներով կամ արգելասահմանի վտանգավոր գոտիներում տեղադրվում են ցուցատախտակներ համապատասխան գրություններով :


Հատկապես շատ մեծ ուշադրություն պետք է դարձնել, որ պատահական հետաքրքրասեր երեխաներ չհայտնվեն շինհրապարակ, կամ թույլատրված սահմանից մոտ գտնվեն վերամբարձերին :

Տարածքը պետք է մշտապես գտնվի անվտանգության աշխատողների հսկողության ներքո :


Վտանգավոր աշխատանքները հիմնականում պետք է կատարվեն օրվա 2-րդ կեսից հետո, երբ դասերն ավարտված կլինեն և դպրոցի տարածքում երեխաներ չեն լինի :

Ստորև ներկայացվում է գլխավոր հատակագիծը, որտեղ երևում են հարակից շինությունները, ճանապարհը և այլն՝



Պատվիրատու - ՀՏԶԿ Կապալատ - «ՍՆՆՈՒՅԻՆ» ԱԲԸ Պայմանագրի № զԻ-04/24			«ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՍՏՐՁԻ ԱՐԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱԿԱՍԻՐԻ ԿԱՌՈՑՈՒՄ»			
ՆԳԻ	Ս. Փոքրիկյան		ՔԱՆԱԿՈՐ ՀԱՏՎԱԳԻԾ	ՓՈՒ	ԵՅԻԵ	ԵԵՐԵՐԻ
Նախագծից	Ռ. Քապիկյան			ՍՆ	Ձ-1	1
Նախագծից	Հ. Կապուսյան		Կրթահամալիրի տարածքի հատակագիծը, Ս1:2000	 «ԳԼՈՒԲԱԼ ԷՆԺՆԵՐԻՆԳ» ՍՊԸ GLOBAL ENGINEERS		
Ստուգից	Ձ. Փոքրիկյան					
Պաշտոնը	Ազգանունը	Ատրուազը	Անունը			

Կրթահամալիրի ցանկապատին եզրով՝ հարավ արևմտյան և հարավ արևելյան հատվածներով անցնում են երկու գյուղամիջյան ճանապարհներ, իսկ ցանկապատի հյուսիս արևմտյան մասը հարակից է մասնավոր տներին, հյուսիս արևելյան հատվածը՝ համայնքային նշանակության հողեր են: Մոտակա շինությունը ցանկապատից գտնվում է մոտ 12մ հեռավորության վրա: Կրթահամալիրից ցանկապատից ուղիղ գծով Երևան-Մեղրի M-2 միջպետական մայրուղուց հեռավորությունը կազմում է մոտ 160մ:

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ		Ձև 1																								
Սեփականատեր Բայաստանի Բանրապետություն		Հաստատում են _____ 2024թ.																								
<i>Վայոց ձորի մարզ հասկայնք Արևելի ընկալվայր Արդիի 1-ին փոցոց թիվ 21</i>		Համայնքի ղեկավար Կ.Տ.																								
Մարզ, համայնք, հասցե		Բ.Սահակյան																								
Հողատեսակացման հիմքը		անուն, ազգանուն, հայրանուն																								
																										
Մակերես հա	2,21000(հա)	Հողամասի																								
Ծածկագիր	10-012-0009-0002	Մասշտաբ 1:5000																								
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 33%;">Երկարություն (X)</td> <td style="width: 33%;">Կողմնաանոթ</td> <td style="width: 33%;">Գծային բաները (Y)</td> </tr> <tr> <td style="text-align: center;">X</td> <td style="text-align: center;">Y</td> <td style="text-align: center;">Y</td> </tr> </table>	Երկարություն (X)	Կողմնաանոթ	Գծային բաները (Y)	X	Y	Y																		
Երկարություն (X)	Կողմնաանոթ	Գծային բաները (Y)																								
X	Y	Y																								
Գործառնական նշանակություն	Հասարակական կառուցապատման	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td colspan="2">Որակավորում ունեցող անձ</td> <td>Իննա Աղամյան</td> </tr> <tr> <td colspan="2">Որակավորման վկայականի համարը</td> <td>N 221</td> </tr> <tr> <td colspan="2">Ստորագրություն</td> <td></td> </tr> <tr> <td colspan="2">Իրավաբանական անձի անվանումը</td> <td>Ա/Չ Իննա Աղամյան</td> </tr> <tr> <td colspan="2">ՀՎՀՀ</td> <td>76827145</td> </tr> <tr> <td colspan="2">Ստորագրություն</td> <td></td> </tr> <tr> <td>ամիս</td> <td>չափազրության</td> <td>01.03.2024թ</td> </tr> <tr> <td>ամսաթիվ</td> <td>հատակագծի կազմման</td> <td>17.04.2024թ</td> </tr> </table>	Որակավորում ունեցող անձ		Իննա Աղամյան	Որակավորման վկայականի համարը		N 221	Ստորագրություն			Իրավաբանական անձի անվանումը		Ա/Չ Իննա Աղամյան	ՀՎՀՀ		76827145	Ստորագրություն			ամիս	չափազրության	01.03.2024թ	ամսաթիվ	հատակագծի կազմման	17.04.2024թ
Որակավորում ունեցող անձ		Իննա Աղամյան																								
Որակավորման վկայականի համարը		N 221																								
Ստորագրություն																										
Իրավաբանական անձի անվանումը		Ա/Չ Իննա Աղամյան																								
ՀՎՀՀ		76827145																								
Ստորագրություն																										
ամիս	չափազրության	01.03.2024թ																								
ամսաթիվ	հատակագծի կազմման	17.04.2024թ																								
<u>Լրացուցիչ նշումներ.</u>		Կ.Տ.																								

Կետեր	X	Y	
1	8522803.0334	4400805.8537	
2	8522808.0708	4400817.3849	12.58
3	8522820.3045	4400833.9561	20.60
4	8522834.9952	4400845.8314	18.89
5	8522851.7786	4400860.3903	22.22
6	8522857.9571	4400888.2641	28.55
7	8522917.6315	4400905.8705	62.22
8	8522942.9787	4400909.4353	25.60
9	8522964.2642	4400901.1053	22.86
10	8522973.3210	4400899.9647	9.13
11	8522986.3854	4400896.1858	13.60
12	8522993.7403	4400885.0336	13.36
13	8522998.0790	4400871.7993	13.93
14	8523012.6028	4400856.6623	20.98
15	8522986.1617	4400839.2605	31.65
16	8523009.6156	4400810.5287	37.09
17	8522976.2031	4400795.6953	36.56
18	8522965.2475	4400792.0463	11.55
19	8522952.5777	4400782.2162	16.04
20	8522934.6550	4400761.3692	27.49
21	8522929.6806	4400757.1952	6.49
22	8522913.4341	4400749.8476	17.83
23	8522913.0007	4400764.8419	15.00
24	8522909.3183	4400765.5380	3.75
25	8522906.5316	4400760.9635	5.36
26	8522898.2711	4400751.0685	12.89
27	8522869.4110	4400756.5394	29.37
28	8522861.6845	4400758.8539	8.07
29	8522823.5939	4400771.5738	40.16
30	8522816.0329	4400775.7562	8.64
31	8522811.6333	4400779.4360	5.74
32	8522805.1923	4400791.1978	13.41
1	8522803.0334	4400805.8537	14.81

Օդափոխություն

1. Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:
2. Էներգոարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր ռեկուպերատորով:
3. Համակարգերի համարները և սպասարկվող սենյակները ներկայացված են օդափոխության սարքավորումների բնութագրում:
4. Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական էլ. շարժաբերով: Փականը բլրկված է արտածման օդափոխիչի հետ:
5. Սան հանգույցներից կազմակերպված են արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ:
6. Ապաստարանի ներածման սարքը տաքացնում է օդը էլ. եղանակով և միացված է էլ. գեներատորին:
7. Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները
8. մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով:
9. Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում:

Նախագծվող կրթահամալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափման միավոր	Քանակ
1	Դպրոցի հզորությունը (տարողությունը)	Աշակերտ	Մինչև 144
2	Մանկապարտեզի հզորությունը (տարողությունը)	Երեխա	Մինչև 40
3	Հողամասի ընդհանուր մակերեսը	քմ	22101.53
4	Կառուցապատման մակերեսը	քմ	2024.36
5	Կառուցապատման տոկոսը	%	9.16
6	Շենքերի ընդհանուր մակերեսը	քմ	3733.18
7	Կրթահամալիրի ընդհանուր մակերեսը	քմ	3620.50
8	Կրթահամալիրի օգտակար մակերեսը	քմ	3248.40
9	Կրթահամալիրի մակերեսը 0.000 նիշում	քմ	1890.40
10	Շինարարական ծավալ	խմ	
11	Կանաչապատման մակերեսը	քմ	13634.17
12	Կանաչապատման տոկոսը	%	61.7
13	Բաց սպորտհրապարակ	քմ	1541
14	Արևային մարտկոցների կայան	հատ/քմ	160/891.2
15	Արևային մարտկոցների կայանի հզորությունը	կվտ	305.57
16	Լրակազմ տրասնֆորմատորային ենթակայանի հզորությունը	կվա	
17	Մաքրման կայանի հզորությունը	լ/վրկ	3
18	Ջերմոց	քմ	32
19	Մանկական խաղահրապարակ	քմ	359.27

**ՊԱՐՄՊԻ ԵՎ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ**

	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափման միավոր	Քանակ
1	Բնահողի քանդում	խմ	542.6
2	Նույնի բարձում և տեղափոխում 5 կմ	խմ	260
3	Բնահողի հետլիցք	խմ	282.6
4	Բազալտե խճի նախաշերտ 80 մմ	խմ	25.05
5	Բետոնե նախաշերտ B7.5 դասի բետոնից 70 մմ	խմ	21.9
6	Հիմքերի բետոնացում B20 դասի բետոնով	խմ	100.2
7	Հիմքերի ամրանավորում Ø14A500c	քմ / կգ	2567 / 3080
8	Հիմքերի ամրանավորում Ø8A240c L=1400 մմ	հատ / կգ	3209 / 1765
9	Առանձին ձողերի տեղադրում Ø12A500c L=1000 մմ	հատ / կգ	1043 / 919
10	Չենապատի իրականացում B15 դասի բետոնից	խմ	206.7
11	80x80x3	մ	468
12	40x60x3	մ	1252.8
13	25x25x2	մ	1472.53
14	Ø6A240c	մ	3510.8
15	Մետաղական ցանց, ռաբիցա 50x50	քմ	764.2

**ՀԵՆԱՊԱՏԵՐԻ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓԱԳԻՐ**

ՅՈՒՅԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		Չափման միավոր	Քանակ
1	Բնահողի քանդում	խմ	2396.5
2	Բնահողի հետլիցք	խմ	1533.76
3	Հենապատի իրականացում B20 դասի բետոնով	խմ	862.74
ՀԵՆԱՊԱՏԻ ԱՄՐԱՆԱԿՈՐՈՒՄ			
1	Ø 14A500c	մ	3834.4
2	Ø 12A500c	մ	21568.5
3	Ø 10A500c	մ	14379
4	Ø 8A240c	մ	14379

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1	Բնահողի քանդում	խմ	17475.8
2	Բնահողի լիցք	խմ	529.2
3	Բնահողի հետլիցք	խմ	1734.3


ԱՐՏԱԶԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԾԱԿԱԼԱԹԵՐԹ			
NN	Աշխատանքի անվանումը	Չ/Մ	Քանակը
1	2	3	4
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ			
ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍ			
1	Հավասարեցնող կոպճավազային շերտ 10սմ ԳՕՍՏ 25607-2009	մ ²	2839.8
2	Խճային հիմք C6 15սմ ԳՕՍՏ 25607-2009	մ ²	2839.8
3	Խոշորահատիկ Ա/բետոն ԳՕՍՏ 9128-2013 h=6սմ	մ ²	2839.8
4	Մանրահատիկ Ա/բետոն ԳՕՍՏ 9128-2013 h=4սմ	մ ²	2839.8
ՄԱՅԹԵՐ			
1	Բետոնե 30x15 եզրաքարի տեղադրում B15 դասի հիմքի բետոնի վրա	զծ մ	231.61
2	Հավաքովի թաղված եզրաքար 8x20 սմ	զծ մ	717.17
3	Խճային հիմք 12սմ ԳՕՍՏ 8267-93	մ ²	900.63
4	Մանրահատիկ Ա/բետոն ԳՕՍՏ 9128-2013 h=3սմ	մ ²	900.63
ԱԻՉԱՄԱՐԳ 15 սմ			
1	Բուսահողի մշակում պահուստում	մ ³	112.87
2	Նույնի բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում դեպի լիցք 5կմ-ից	մ ³	112.87
3	Բուսահողի փոում և հարթեցում մեքենա մեխանիզմով	մ ²	752.49
4	Խոտածածկի սերմի ցանում 1քմ-250գր	մ ²	752.49

- ՀՀ կառավարության որոշումները և քաղաքաշինության ոլորտում գործող իրավական նորմերի շրջանակը:

a. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները


Կրթահամալիրի գլխավոր հատակագիծը ներկայացված է Նկ.1-ում:

Նկ.1 Արփիի կրթահամալիրի տարածքի իրավիճակային հատակագիծը:




Նախատեսվող գործունեության տարածքում ծառաթփային բուսականություն առկա չէ, ծառեր չկան: Գոյություն ունեցող դպրոցի տարածքում առկա են ծառաթփային բուսականություն և ծառեր:

ՉԻՆՈՒՄ ԲԱՏԱԿԱԳԻԾ
Մ 1:500



Ստորև ներկայացվում է կանաչապատման հատակագիծը՝



Ոռոգումն իրականավելու է տարծքի արևմտյան մասում նախատեսված ոռոգման ջրի բաշխման հանգույցից , որտեղ ջրի ֆիլտրացումից հետո կատարվելու է ջրի բաշխում ամբողջ տարածքում:

Շինարարական աշխատանքների կազմակերպում

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է՝

- աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,
- բացատրագիր, կատարվող աշխատանքների անվտանգության
- պահպանման հրահանգներ
- աշխատանքի կատարման ժամանակացույց,
- շինարարական հրապարակի գլխավոր հատակագիծ,
- հավելված / մոնտաժային մեխանիզմի ընտրություն,
- կատարվող աշխատանքների որակային ստուգման հրահանգներ/:

Բաժնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85*՝ “Շինարարության տնտրության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- ГОСТ 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 <<ՇԻՆԱՐԱՐԱՐԱՄԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Շինարարության պայմանները՝

Նախագծվող շինությունը դպրոցի շենք է:

Կառույցը հանդիսանում է որպես միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային հիմնակմախքով կրող համակարգ որի արտաքին և ներքին մակերեվույթները կարկասի լցվացքի ձևով շարվում են բետոնե բլոկներով, որոնց մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կարկասին: Հիմքերը նախատեսվում է

իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով:

Ռելիեֆն հարթ է փոքր թերությամբ արևմուտքից արևելք:

Հ/Հ	Անվանումը	Մակնիշը	Չափմ. միավոր	
1	2	3	4	5
1	Էքսկավատոր «ЛТЗ -60 АБ» մակնիշի սրակտորի բազայով	ALEX 2EL	հատ	1.0
2				
3	Թրթուրավոր վերամբարձ -պաքի երկարությունը -14.4- 34.4 մ -կեռիկի բարձրությունը - 18.5- 28.5 մ -բեռնաբարձությունը - մինչև 16.0 տ	MKT-25.01A	հատ	2.0
4	Ավտոբետոնախառնիչ	ABC	հատ	1.0
5	Բետոնանամուղ պոմպ	SANY HBT50C-1413 III	հատ	1.0
6	<u>Շարժական բետոնախառնիչ</u>		հատ	1.0
7	<u>Բետոնահարթեցնող մեքենա</u>	<u>Sturry/Paver Micros</u>	հատ	1.0
8	Ավտոինքնաբախի	MA3651705-281 P1	հատ	1.0
9	Կողավոր ավտոմեքենա		հատ	1.0
10	Կոմպրեսորային կայան	ԶԻՖ - 55	հատ	2.0
11	Թրթրան մակերեսային	Ս - 414	հատ	2.0
12	Թրթրան խորության	ԻՎ - 117	հատ	2.0
11	Թրթրան	ԻՎ - 113	հատ	2.0
12	Գլղոն	A - 6223A	հատ	1.0
13	Էռակցման ապարատ	ՍՏ -2	հատ	2.0
14	Հատակներ հարթեցնող	ՍՕ-179 և ՍՕ-155	հատ	1.0
15	Ձեռքի տոփանիչ	Ի - 157	հատ	2.0
16	Հեռահար մուրճ	ՄՊ-5Պ	հատ	2.0
17	Էլեկտրամուրճ	ԻԷ-4207	հատ	1.0
18	Կենտրոնախույզ պոմպ	Ս-245	հատ	2.0
19	Փոխադրիչ ծալավեն	SU-13	հատ	
20	Ջրութահալ սարքավորում	ՍՕ - 179	հատ	

Ներկայացվող գործունեության նախաշինարարական փուլում, համաձայն գործող նորմերի, կիրականացվի դպրոցի տարածքի ժամանակավոր ցանկապատում մետաղական թիթեղներով՝ ապահովելով առողջության և աշխատանքի անվտանգության պայմանները, ինչպես նաև կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, մասնավորապես՝

- հրապարակի լուսավորության ապահովման միջոցառումները
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքները՝ ապահովելով շինարարական ճամբարում սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, աշղեկի աշխատասենյակ և այլն)
- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը
- շինաշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները:

Առաջարկություններ օբյեկտի շինարարության

կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվում է մրցույթով:

Շենքի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից: Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի իրականացնել ավանդական եսանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության պետական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից: Ժամանակավոր շինությունների, ավտոկոնսկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինությունների կիրառում ՀՀԱ միջոցների օժտմամբ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից, շաղախը և բետոնը կառաքվեն Երևանի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է լրանց պահեստավորում և տեղադրում:

Բետոնային խառնուրդը միաձույլ բետոն և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով, շաղախատարներով:

Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը իրականացվում են ինչպես շինհրապարակում, այնպես էլ մեքենայացման բազայում:

Շինարարության մատակարարումը ացթիլենով, թթվածնով իրականացվում է կենտրոնացված եղանակով:

Շինարարության ժամկետները

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն /596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113/ ՄՆԻՊ 1.04.03-85 մաս., II հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը: Կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը, օբյեկտի ընդհանուր մակերեսը մոտ 3330.0մ² է, կառուցվում է որպես միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային հիմնակմախքով կրող համակարգ, որի արտաքին և ներքին մակերեվույթները կարկասի լցվածքի ձևով շարվում են բետոնե բլոկներով, որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական երկաթբետոնե կարկասին: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավեններով. ըստ առավել համապատասխան գլուխ N 3 1. բնակելի շենքեր N 12 կետերը համաձրելով շինարարական արտաձրանքի տեխնոլոգիական

առանձնահատկությունների հետ շինարարական տևողությունը սկսման օրվանից կազմում է 24 ամիս շինարարության համար:

Շինարարության ջրի և էներգառեսուրսների պահանջարկը

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա:

Էներգառեսուրսների և ջրի պահանջարկ

NN	Անվանում	Չափման միավոր.	Պահանջարկ
1	Էլեկտրաէներգիա	Քաշվ,ԿՎԱ	22.0
2	Ջուր	մ ³ /օր	8.52
3	Խողացված օդ	հատ	1 կոմպրեսոր

Հակահրդեհային նպատակներով ջրի պահանջարկը 10լ/վրկ: Նշված պահանջարկները պետք է ապահովվեն ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից և ջրմուղի քաղաքային ցանցից:

Ստորև բերվում են ջրօգտագործման հաշվեկշիռը և անհրաժեշտ էլեկտրական հզորության հաշվարկը:

Բարձրահարկ բազմաբնակարան շենքի կառուցման համար անհրաժեշտ էլեկտրական հզորության, մեկ միավոր մասի շինարարության համար`

1.	Տոփանիչ CR 3/60	2
2.	Եռակցման սարքեր / 2 հատ	3
3.	Տարբեր էլեկտրաուժային սարքավորումներ /դակիչներ, դուրեր, սղոցներ և այլն/	5
4.	Էլեկտրաթրթռիչներ	2
5.	Շինհրապարակի լուսավորում և կենցաղ	8
7.	Շենքի լուսավորում	7

$P_{տեղ.} = 22 \text{ ԿՎտ}$

$P_{հաշվ.} = P_{տեղ.} \cdot K_{պահանջ.} = 31.8 \text{ ԿՎտ} / 0,8 = 39.75 \text{ ԿՎԱ}$

Չրոգաագործման հաշվեկշիռ

Անվանում	չափ. Միավ.	չափ. Միա վ	Հիմք	Միավ. Ծավ.	Պահանջվող որակ	Ծավալ մ3/օր խմելու.	Ծավալ մ3/օր տեխնիկ
1	2	3	4	5	6	7	8
Տեսեսական/կենցաղային կարիքներ							
Կենցաղային ցնցուղ- լվացարան	1աշխատ.	23	Пособие к СНиП 3.01.01-85	0.016	խմելու.	0.368	

Կենցաղային	Ի	46		0.025	խմելու.	0.75	
Դռերի լվացում	մեքենա հատ	10		0.14	տեխնիկական		1.40
Բեռոնի պատրաստ.	Բեռոն մ3	3.0		0.72	խմելու.	2.16	
Բեռոնի խնամք	ջրում,մ3	20		0.0314	խմելու.	0.63	
Շինհրապար ակի մաքրում	ջրում,մ2	800,0		0.004	տեխնիկական		3.20
Ընամենը՝						3.91	4.6

Նախագծվող դպրոցի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) և VEOLIA կողմից կողմից տրված (01.12.2022 թ.) տեխնիկական պայմանների համաձայն:

Արտաքին հրդեհների մարման համար նախատեսվում է հակահրդեհային հիդրանտ Հրդեհաշիջման ջրի ծախսը համաձայն նորմերի հաշվարկվում է 2 շիթ, յուրաքանչյուրը՝ 2.5 լ/վրկ: Հակահրդեհային ջրագիծն իրականացվելու է պողպատե եռակցովի խողովակներով:

Կանաչապատման աշխատանքներ նախատեսվում է համաձայն ՀՀ կառավարության 08.02.2018թվականի N108-Ն որոշման:

5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲԱՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Տեղանքի ռելիեֆը և երկրաբանությունը

Կրթահամալիրը նախատեսվում է կառուցել ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրի վարչական տարածքում:

Վայոց ձորի մարզի տարածքի բարձրությունը ծովի մակարդակից տատանվում է 850մ(Արենի) մինչև 3522մ (Վարդենիս լեռ):

Համայնքի Ագարակաձոր, Արփի, Արենի բնակավայրերի միջով է հոսում Արփա գետը, որի Գնիշիկ և Ելփին վտակները հոսում են համանուն բնակավայրերի տարածքներով:

Գեոմորֆոլոգիական տեսանկյունից տարածքի ռելիեֆը կառուցվածքային էրոզիոն-տեղա-տարումային տիպի է: Եղեգնաձորի շրջանը բոլոր կողմերից շրջապատված է բարձր լեռնագագաթներով, որոնք ճեղքված են խորը կիճերով:

Երկրաբանական կառուցվածքը

Տարածքը ներառում է Վայքի և Վարդենիսի լեռների արևմտյան հատվածները: Վայքի լեռները հանդիսանում են Զանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լեռնաճյուղ: Լեռնաշղթան ունի ծալքաբեկորավոր կառուցվածք: Արևմտյան մասը աստիճանաբար ցածրանում, ճյուղավորվում և ձուլվում է Նախիջևանի հարթավայրին: Կան մինչև 150մ բարձրության էքստրուզիվ, կոնաձև գմբեթներ:

Հյուսիսային լանջը էրոզիոն-դենուդացիոն աստիճաններով ցածրանում է դեպի Արփայի հովիտը: Կան քարայրեր: Հարավային և հարավ-արևմտյան լանջերը ավելի մասնատված են: Արփա և Նախիջևան գետերի վտակները լեռնաշղթայի լանջերին առաջացրել են ջրհավաք ձագարներ և էրոզիոն գոգավորություններ,


որոնց մեջ աչքի է ընկնում հարավային լանջին զարգացած Զահուկի կրկեսաձև գոգավորությունը:

Բարձրալեռնային գոտում արտահայտված է սառնամանիքային հողմահարումը: Կան ժայռային մնացուկներ, քարափներ ու դարափուլեր: Լանջերը ծածկված են տափաստաններով, տեղ-տեղ՝ տրագանտային թփուտներով, գագաթային մասը՝ ենթալպյան և ալպյան մարգագետիններով:


Հայցվող տարածքի շերտագրությունն հետևյալն է՝

1. Բուսահող մինչև 20սմ, թափվածքային գրունտ մինչև 1մ
2. Շագանակագույն ավազակավեր մինչև 6մ
3. Սպիտակահողեր 2-8մ

Շրջանի լանջերի թեքության և լեռների երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև:



Նկար 2. Երկրաձևաբանական քարտեզ




Նկար 3. Մակերևույթի գերակշռող թեքություններ

Սեյսմիկ բնութագրերը

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված՝ ՀՀՇՆ II-20.04.2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերի սահմանված են չափանիշներ, համաձայն որի, ըստ ուժգնության աճող հաջորդականության առկա են՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներ, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար՝ 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների:

Նախատեսվող գործունեության տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում՝ $a=300$ սմ/վրկ², $A=0.3g$:

Նկար 4. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ




Կլիմայական պայմանների հակիրճ նկարագրությունը

ՀՀ-ն գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով ու կլիմայական հակադրություններով: ՀՀ կլիմայի վրա մեծ է հարակից տարածքների՝ Մեծ Կովկասի, Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը: ՀՀ տարածքին բնորոշ է արևոտ կլիման:

ՀՀ-ում տարվա ընթացքում տիրապետում են մերձարևադարձային գոտուն բնորոշ արևմտյան օդային հոսանքները, որոնք լեռնային ռելիեֆի պայմաններում փոխում են իրենց բնույթը և պայմանավորում քամիների բազմազանությունն ու ռեժիմը: Ըստ բարձրության՝ մեծանում է քամու արագությունը:

Համաձայն Վայոց Ձորի մարզպետարանի պաշտոնական կայք էջի տարածաշրջանը գտնվում է ծովի մակարդակից միջին բարձրության վրա: Համայնքի ֆիզիկա-աշխարհագրական կոմպլեքսները ներկայացված են ցածրադիր և միջին բարձրության գոտիներում, որտեղ գերիշխում են կիսաանապատները և չոր տափաստանները: Կլիման գլխավորապես պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ, ըստ բարձրության՝ տաք, չոր ցամաքայինից մինչև ձյունամերձ: Ընդհանուր հաշվով, այս մարզի կլիմայական պայմանները աչքի են ընկնում չորությամբ և ցամաքայնությամբ, ինչպես նաև ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Ձյունածածկույթի բարձրությունը Վայոց ձորի նախալեռներում լինում է 10-76 սմ, իսկ բարձրադիր շրջաններում՝ մինչև 2 մ:



Ստորև ներկայացվում է «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» (https://www.arlis.am/Annexes/7/2024_N03hav.pdf) նորացված նորմատիվային փաստաթղթում առկա «Արենի» և «Եղեգնաձոր» օդերևութաբանական կայանների կլիմայական տարրերի արժեքները (օդի միջին ջերմաստիճան, օդի հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, քամի, արևափայլի տևողություն, անարև օրերի քանակ) աղյուսակային տեսքով / որոշ տվյալներ առկա չեն Արենիի կամ Վայքի համար/

Աղյուսակ 2 Օդի միջին ջերմաստիճան (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
19. Եղեգնաձոր	-3.3	-1.6	4.0	10.2	15.0	19.8	23.9	23.8	19.5	12.5	5.8	-0.2	10.8	-30	39

Աղյուսակ 11 Օդի հարաբերական խոնավությունը (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
14. Եղեգնաձոր		72	69	61	58	57	50	45	44	45	58	65	72	58	75	60	44	28
6. Արենի		71	68	60	59	57	51	46	46	50	59	67	71	59	71	60	46	34

Աղյուսակ 13 Մթնոլորտային տեղումները (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
9. Արենի	30	32	43	56	53	35	18	9	11	35	33	30	385	168	217
	24	31	34	34	45	38	47	27	27	36	23	25	47		

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը												Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ	
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ						Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը			Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ				
1	2						3			4			5	
10. Արենի	58						36			62			21	
19. Եղեգնաձոր	33	34	41	58	59	41	21	15	14	35	32	34	174	243
	27	36	35	40	34	65	33	33	42	41	39	37		

Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: ՊՈԱԿ-ը մշտական վերահսկողություն է կատարում 16 ստացիոնար դիտակայանների միջոցով, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2023 թվականին 2022 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը²:

Քանի որ Վայք համայնքում կամ հարակից բնակավայրերի տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան, ապա որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց³: Ըստ այդ նուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են:

Փոշի՝ 0.2 մգ/մ³;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻՆՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք

Աղտոտող նյութ

Միջին հնգամյա կոնցենտրացիա
(ֆոն), մգ/մ³

Արարատ	Ազոտի երկօքսիդ	0.018
	Ծծմբի երկօքսիդ	0.026
	Փոշի	0.110

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Հողօգտագործումը

Կառուցապատվող տարածքը հանդիսանում է ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի սեփականությունը, կադաստրային ծածկագիրն է 10-012-0009-0002, այն հանդիսանում է նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իկակ գործառնականը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը կազմում է՝ 2,21հա: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը ներկայացվում է հավելվածում:

Ջրային ռեսուրսներ

Վայոց ձորի ջրագրական ցանցը բավականին խիտ է: Մարզի ողջ տարածքով հոսում է Արփա գետը՝ իր Դարբ, Կապույտը, Գնիշիկ, Գրավ, Եղեգիս, Հերհեր, Մալիշկա, Ելփին և այլ վտակներով: Այն սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակի հյուսիս արևմուտքից՝ 3200մ բարձրությունից, և թափվում Արաքս գետը՝ Նախիջևանի և Թուրքիայի սահմանի վրա:

Վայոց ձորի բոլոր գետերն ու գետակները սրընթաց են, արագահոս, ունեն մեծ անկում ու թեքություն և հարուստ են էներգետիկ պաշարներով: Արփայի վտակները տեղ-տեղ առաջացնում են նաև սահանքներ և ջրվեժներ: Նշանավոր է բնության հուշարձանի կարգավիճակ ունեցող Ջերմուկի ջրվեժը (Ջրահարսի ջրվեժը):

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի

առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»- ի կողմից:

Համաձայն ՊՈԱԿ 2022 թվականի մակերևութային ջրերի որակի ամփոփագրի Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ջերմուկ քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով, կախութային չոր նյութերով, Վայք քաղաքից վերև՝ երկաթով և ալյումինով, Վայք քաղաքից ներքև՝ երկաթով, Եղեգնաձոր քաղաքից վերև՝ մոլիբդենով և երկաթով, Արենի գյուղից ներքև՝ պայմանավորված մոլիբդենով, երկաթով և Բարիումով:


Եղեգնա գետի ջրի որակը Շատին գյուղից ներքև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Դարբ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, Բարիումով, ալյումինով և ծարիրով, գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:

Հերիեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Եղեգնա գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով⁴:

ՀՀ Արարատյան ջրագանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնն իրականացնում է մակերևութային ջրերի քանակական և որակական մոնիթորինգ: Մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրանցքների, ջրամբարների և Սևանա լճի 93 դիտակետ, որոնցում կատարվում են ամենօրյա հիդրոլոգիական դիտարկումներ՝ օդի և ջրի ջերմաստիճանների, ջրի մակարդակի, սառցային երևույթների և ջրի ելքի չափումներ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է գետերի, ջրամբարների, Որոտան-Արփա, Արփա-Սևան ջրատարների և Սևանա լճի 151 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական 40-65 ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշման:

ՀՀ մակերևութային ջրերի որակը

Մակերևութային ջրերի որակի և քանակի մոնիթորինգի դիտացանց





ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻԴՐՈՄԵՏԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՀԻԴՐՈԼՈԳԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024 թվականի հոկտեմբերի III տասնօրյակում գետերում ջրի կանխատեսվող ելքերը

№	Գետ	Դիտակետ	Կանխատեսվող ելքը (մ ³ /վ)	Ելքը 2023թ. (մ ³ /վ)	Ելքերի բազմամյա բնութագրերը (մ ³ /վ)		
					միջին	առավ.	նվազ.
14	Վեղի	Ուրցաձոր	0.30	0.24	0.58	1.52	0.091
15	Արփա	Ջերմուկ	3.30	2.95	2.77	4.23	1.40
16	Արփա	Արենի	9.00	4.94	6.58	13.7	2.82
17	Եղեգիս	Շատին	2.50	2.33	2.85	4.59	1.58

Թողարկվել է 18.10.2024թ.

*Հիդրոլոգիայի ծառայության պետ՝
 Հիդրոլոգիական կանխատեսումների
 բաժնի պետ՝
 Հեռ. 091 80 88 21*

*Ա.Մխասկյան
 Լ.Շարարյան*



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻԴՐՈՄԵՏԵԿՆԻԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՀԻԴՐՈԼՈԳԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԻԴՐՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024 թվականի հոկտեմբերի III տասնօրյակում գետերում ջրի կանխատեսվող ելքերը

№	Գետ	Դիտակետ	Կանխատեսվող ելքը (մ ³ /վ)	Ելքը 2023թ. (մ ³ /վ)	Ելքերի բազմամյա բնութագրերը (մ ³ /վ)		
					միջին	առավ.	նվազ.
1	Փամբակ	Թումանյան	8.00	4.84	7.07	16.0	2.69
2	Դեբեդ	Այրում	22.0	17.4	20.8	74.5	10.0
3	Աղստև	Իջևան	6.00	3.33	5.25	22.8	1.51
4	Ախուրյան	Ախուրիկ	5.00	4.05	5.83	12.6	2.24
5	Հրազդան	Հրազդան	2.50	2.19	3.37	5.76	2.03
6	Հրազդան	Արգել	2.20	2.16	4.12	11.7	2.16
7	Զկնազետ	Ծովագյուղ	0.30	0.25	0.37	2.13	0.094
8	Մասրիկ	Ծովակ	2.50	1.99	3.22	6.59	1.86
9	Վարդենիս	Վարդենիկ	0.80	0.76	0.76	2.05	0.14
10	Մարտունի	Գեղիովիտ	0.60	0.58	0.83	1.71	0.21
11	Արգիճի	Վ.Գետաշեն	3.00	2.56	2.60	5.08	0.94
12	Գավառազետ	Նորատուա	2.70	1.99	3.00	5.47	1.70
13	Ազատ	Գառնի	2.30	1.82	2.93	6.01	1.09
14	Վեդի	Ուրցաձոր	0.30	0.24	0.58	1.52	0.091
15	Արփա	Զերմուկ	3.30	2.95	2.77	4.23	1.40
16	Արփա	Արենի	9.00	4.94	6.58	13.7	2.82
17	Եղեգիս	Շատին	2.50	2.33	2.85	4.59	1.58
18	Ողջի	Կապան	1.00	0.91	3.91	9.69	0.65
19	Որոտան	Գորայք	2.30	1.67	2.13	2.95	1.23
20	Ծղուկ	Ծղուկ	0.60	0.47	0.55	0.89	0.074
21	Գորիսզետ	Գորիս	0.40	0.40	0.39	0.95	0.12

Թողարկվել է 18.10.2024թ.

*Հիդրոլոգիայի ծառայության պետ՝
 Հիդրոլոգիական կանխատեսումների
 բաժնի պետ՝
 Հեռ. 091 80 88 21*

*Ա.Միսակյան
 Լ.Շարարյան*

Կենսաբազմազանություն

Վայոց ձորի մարզի հողաբուսային ծածկույթն ու կենդանական աշխարհը բազմազան են և գլխավորապես պայմանավորված են վերընթաց լանդշաֆտային գոտիականությամբ: Այսպիսով, մարզի տարածաշրջանները աչքի են ընկնում կենսաբազմազանության տարբեր տեղաբաշխվածություններում: Օրինակ՝ Վայքի ֆիզիկաաշխարհագրական շրջանում իրար են հաջորդում լանդշաֆտային երեք հարկեր, ցածրադիր հարկում կիսաանապատային և չոր տափաստանային լանդշաֆտներն են, որոնք տարածվում են 1200 մետրից (Արփա գետի մերձհունային մասը՝ մինչև Մալիշկա) մինչև 1700 մետր (Ռինդի, Աղավնաձորի, Ազատեկի, Գլաձորի սարավանդները) բարձրություններում: Միջնամասում (մինչև 2300 մ) գերիշխում են լեռնատափաստանային, լեռնաանտառային (Ջերմուկ առողջարանի շրջանում, Դարբի, Եղեգիսի և Սուլեմայի հովիտներում) և մարգագետնատափաստանային լանդշաֆտները:

Բուսականություն

Տարածաշրջանի բուսական ծածկը ներկայացված է Վայոց ձոր մարզին բնորոշ փետրախոտային տափաստանային բուսականությամբ: Այստեղ գերիշխում են փետրախոտերը (*Stipatirsa*, *S. cap illata*), *Thmus kotschyanus*, *Tanacetumchiliop hyllum*:

Տարածված են նաև *Festuca valesiaca* Gaudin, *Koelera albobii* Domin., *Koelериacri stata* (L. Pers., *E lytrigia t richophor* տեսակները:

Տարածաշրջանում հայտնի բուսատեսակներից 55-ը (ֆլորայի մոտ 6.1%-ը) գրանցված են 2010թ. ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝ Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 11 տեսակ: Դրանք են՝ Սոխ անհարթացողուն *Allium scabriscapum*, Սոխ թալիշյան *Allium talyschense*, Տերեփուկ Թամանյանի *Rhaponticoides tamaniana*, Ստեպտորամֆուս Չերեպանովի *Steptorhamphus czerepanovii*, Սոնալրջուն սրապտուղ *Sameraria cardiocarpa*, Սոնալրջուն լրջունատերև *Sameraria glastifolia*, Բոշխ կիլիկիական *Carex cilicica*, Գազ Ախունդովի *Astragalus achundovii*, Սզնի Շովիցի *Crataegus szovitsii*, Ստելերոպսիս Մաղաքյանի *Stelleropsis magakjanii* և Խթանաբույս երկարածաղիկ *Centranthus longiflorus*:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 46 տեսակի էնդեմներ, որից 16 տեսակ Հայաստանի էնդեմներ, 20 տեսակ Հարավային Անդրկովկասի էնդեմներ, 6 տեսակ Անդրկովկասի էնդեմներ և 4 տեսակ Կովկասի էնդեմներ:

Հարկ է նշել, որ անմիջապես գործունեության տարածքում բացակայում են Կարմիր գրքային և վայրի բուսատեսակներ:

. Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի կենդանական աշխարհը չափազանց բազմազան է: Թռչուններից հանդիում են բազմաթիվ ճնճղուկազգիներ, որոնցից են արտույտների, սերինոսների, դրախտապանների տարբեր տեսակները:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդաններից դիտարկվել են նապաստակ, աղվես, սովորական դաշտամուկ, մոխրագույն առնետ:

Արձանագրվել են գայլի կենսագործունեության հետքեր: Նկատվել է դաշտային արտույտներ, բայց տեղամասի սահմաններում բներ չեն գտնվել:

Տարածքում առկա չեն ծառեր, գտնվում է անմշակ վիճակում, բուսածածկը՝ մոլախոտեր: Դպրոցի տարածքում առկա է ռոռզման ցանց:

Տարածաշրջանի վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ:

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Վայքի տարածաշրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներից առկա է «Եղեգիս» և «Գնիշիկ» պետական արգելավայրերը:

«Եղեգիս»-ի պահպանման օբյեկտներն են անտառային լանդշաֆտները և հազվագյուտ կենդանիները: Կազմավորվել է 1971-ին, ունի 4200 հա տարածք: Գտնվում է ՀՀ Վայոց ձոր մարզում՝ Եղեգիս գետի ավազանում: Հեռավորությունը գործունեության վայրից՝ ավելի քան 13 կմ:

«Գնիշիկ» արգելավայրը գտնվում է Գետիկ գետի ձախափնյակում, ծովի մակարդակից 1500-2700 մ բարձրություններում: Հիմնավորվել է 1971 թվականին, ունի 5728 հա տարածք: Ստեղծվել է՝ անտառային կենդանիների պահպանության նպատակով:

Նախատեսվող գործունեության տարածքը արգելավայրից գտնվում է ավելի քան 6,5 կմ հեռավորության վրա:

կողմից: Դեռևս մ. թ. ա. VIII դ. Վայոց ձորի ներկայիս տարածքն ընդգրկված է եղել Ուրարտական թագավորության կազմում, ապա Մեծ Հայքի թագավորության մեջ՝ կազմելով Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառը: Եղել է բազմաթիվ իշխանությունների նստավայր, հատկապես ծաղկում է ապրել Զաքարյան, Պռոշյան և Օրբելյան իշխանությունների տիրապետության օրոք (XII-XIV դդ): XIII դ. պատմության մեջ Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է Վայոց ձորի 94 բնակավայրերի անուն: Այդ դարերում են կառուցվել բազմաթիվ նշանավոր եկեղեցիներ, վանքեր, կամուրջներ, քարվանսատներ, որոնք այսօր տուրիստական կարևոր օբյեկտներ են և Վայոց ձորի հարուստ պատմության լուռ լեզվավկաներն են: Միջնադարում Վայոց ձորի տարածքով է անցել «Մետաքսի մեծ ճանապարհը», որով այսօր անցնում է Մարտունի- Եղեգնաձոր խճուղին:

Վայոց ձորի պատմության վատագույն ժամանակաշրջանը XV-XVII դդ են, երբ թրքախոս ցեղերն ու իրանական զորքերը ավերել են շեն գյուղերը, տեղահանել բնակչությանը: Ռուսաստանին միանալուց հետո այն կազմում էր Երևանի նահանգի Շարուր-Ղարալագյազի գավառը: 1918-20թթ. եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության կազմի մեջ, 1920-91թթ. Խորհրդային Հայաստանի կազմի մեջ: Խորհրդային իշխանության վարչական բաժանման ժամանակ 1929-1930թթ-ից մարզի ներկայիս տարածքը բաժանված էր Եղեգնաձորի և Ազիզբեկովի (այժմ՝ Վայք) շրջանների միջև, 1991թ. մտել է Հայաստանի անկախ Հանրապետության կազմի մեջ՝ ենթարկվելով 1995թ. վերջին վարչատարածքային բաժանմանը, որից հետո վերը նշված շրջանները միավորվեցին Վայոց ձորի մարզի մեջ: Մարզը ունի կտրտված մակերևույթ՝ լայն, խորը ձորերի և բարձր լեռների երկիր է: Հարևան մարզերի հետ կապող ճանապարհները անցնում են բարձրադիր, դժվարամատչելի և ոլորապտույտ լեռնանցքներով: Գեղարքունիքի մարզի հետ կապված է Սուլեմայի լեռնանցքով (2410մ), Արարատյան գոգավորության հետ՝ Զովաշենի (Թուխմանուկի) լեռնացքով, Սյունիքի հետ՝ Որոտանի լեռնանցքով: Մարզի կենտրոնով ձգվում է Երևան-Արտաշատ-Եղեգնաձոր-Վայք-Մեղրի-Իրան միջպետական նշանակության մայրուղին:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վայոց ձորի մարզն իրավ ձորերի, խոր կիրճերի, բարձրադիր լեռների, սառնորակ աղբյուրների ու սրընթաց գետակների և խորհրդավոր քարանձավների երկիր է: Այն իրենից ներկայացնում է բոլոր կողմերից լեռներով շրջապատված մի թասաձև գոգավորություն՝ բարդ և խիստ մասնատված մակերևույթով: Բարձրությունը ծովի մակարդակից տատանվում է 850մ (Արենի) մինչև 3522մ (Վարդենիսի լեռ): Այս մարզին բնորոշ են լանդլաֆտի բազմազանությունն ու ռելիեֆի գոտիականությունն ու կտրվածությունը, որով էլ պայմանաորված է ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը: Առանձնացվում են 3 ենթաշրջաններ՝ Արփայի գոգավորություն, Վայքի ծալքաբեկորավոր լեռնաշղթա (ձգվում է հարավում), Վարդենիսի հրաբխային լեռնավահան: Մարզի արևելյան սահմանը Սյունիքի հետ անցնում է Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային բարձրադիր գագաթներով: Վայոց ձորի մարզին բնորոշ են նաև երկրակեղևի սաստիկ ցնցումներ, որի անխոս վկաններն են 735թ. ավերված Մոզ քաղաքի ավերակները: Նշենք, որ Մոզ քաղաքը կործանվել է հրաբխի ժայթքումից և երկրաշարժից:

Կլիման աչքի է ընկնում չորությամբ: Տեղումների քանակը ըստ բարձրության տատանվում է 300-800մմ, համեմատաբար մեղմ ամառներ լինում են լեռների բարձրադիր հատվածներում: Բնական հիմնական լանդշաֆտները կիսաանապատներն ու տափաստաններն են: Տիրապետում են լեռնաշագանակագույն և մարգագետնատափաստանային հողերը: Մարզի տարածքում հատնաբերվել են պղնձի, տուֆի, մարմարի, կրաքարի, կավի, ավազի, բազալտի, գրանիտի, ֆելզիտի, (Մարտիրոսի ֆելզիտը), կվարցային ավազի և հանքային ջրերի մեծ պաշարներ: Սակայն մետաղական նշանակության պաշարները դեռ չեն շահագործվել:

ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Վայոց ձորի մարզի բուսական աշխարհի տեսակային կազմը հարուստ է: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ, որոնցից 1500 տեսակը խոտաբույսեր են, որոնց մեջ գերակշռում են դեղաբույսերը: Մարզն աղքատ է անտառներով (տարածքի 1.6% կամ 3700հա): Սակայն անտառի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ տեսակներ են: Դրանց մեջ կան հատուկ պահպանվող տարածքներ՝ Հերիերի գիհու նոսրանտառային և Ջերմուկի անտառային արգելավայրերը: Բնական պայմանների բազմազանությամբ է պայմանավորված նաև հարուստ կենդանական աշխարհի գոյությունը: ՀՀ –ում գրանցված 460 տեսակի կենդանիներից 225-ը հանդիպում են Վայոց ձորի մարզում: Դրանցից են բեզոարյան այծը, վայրի ոչխարը՝ (մուֆլոնը), վայրի խոզը, գորշ արջը, աղվեսը, գայլը, նապաստակը, թռչուններից՝ լորը, քարակաքավը, անգղերը, արծիվները, ձկնատեսակներից՝ կարմրախայտը, բեղլուն, կողակը: Հաճախակի հանդիպում են նաև թունավոր օձեր՝ հայկական իժ, գյուրգա: Ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների շատ տեսակներ գրանցված են «Կարմիր գրքում»: Կենդանիների պահպանման նպատակով ստեղծվել են արգելավայրեր: Վայոց ձորի մարզում աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, խաղողի, սալորի, սերկևիլի, փշատի, ընկույզի բազմաթիվ տեսակներ, բազմաթիվ հատապտուղներ:

ՋՐԱԳՐԱԿԱՆ ՑԱՆՑԸ

Վայոց ձորի տարածքը մասնատված է բազմաթիվ գետակներով, գետերով, հովիտներով: Հիմնական զարկերակը Արփա գետն է, որը մարզի տարածքում հոսում է 92կմ, 2080մ քառ. ջրահավաք ավազանով: Արփան սկիզբ է առնում մարզի տարածքում՝ 3260մ բարձրությունից, Սյունիքի բարձրավանդակի հյուսիսարևմտյան լանջերից, թափվում է Արաքս գետը, Նախիջևանի տարածքում: Այն հարուստ է վտակներով, որոնք տեղ-տեղ առաջացնում են սահանքներ և ջրվեժներ, որոնցից են Ջերմուկի (Ջրահարսի ջրվեժը) և Հերիերի ջրվեժները: Ամենախոշոր վտակը Եղեգիսն է, որի հովիտը Վայոց ձորի գեղատեսիլ շրջաններից է, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներից մեկը: Վայոց ձորի բոլոր գետերն ու գետակները սրբնթաց են, արագահոս, ունեն մեծ անկում ու թեքություն և հարուստ են էներգետիկ պաշարներով: Արփայի ջրերի մի մասը Սևանա լիճ փոխադրելու նպատակով կառուցվել է 48կմ երկարությամբ Արփա-Սևան ստորգետնյա ջրատար թունելը, որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից: Մարզում է գտնվում նաև Հերիերի ջրամբարը և

էլի մի շարք փոքր լճեր և լճակներ, որոնք ունեն բնապահպանական և հանգստի գոտու նշանակություն:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Բնակչության թվաքանակով և խտությամբ Վայոց ձորի մարզը ՀՀ մարզերի շարքում զբաղեցնում է վերջին տեղը: 2009թ. հունվարի 1-ի տվյալներով Վայոց ձորի բնակչության թիվը կազմում է 55800 մարդ, որից 19500-ը քաղաքային բնակչություն է, իսկ 36500-ը՝ գյուղական: Մարզն ունի 44 համայնք, որից 3-ը՝ քաղաքային (Եղեգնաձոր, վայք, Ջերմուկ): Վայոց ձորում գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումներ չկան: Քաղաքները ևս փոքր քաղաքներ են: Ամենախոշորը մարզկենտրոն Եղեգնաձորն է, որի բնակչության թիվը 8200մարդ է (2009թ.): Քաղաքը գտնվում է Երևան-Ստեփանակերտ-Իրան միջպետական ճամապարհի վրա: Քաղաքի հարավով հոսում է Արփա գետը, հյուսիսում քաղաքին են ձուլվում Գլաձոր և Վերնաշեն գյուղերը: Քաղաքում աստիճանաբար ակտիվանում է մշակութային կյանքը զարգանում է կրթական ոլորտը: Վայք ու Ջերմուկ քաղաքները ունեն մինչև 6000 բնակիչ (2009թ.): Վերջինս առողջարանային քաղաք է: Այստեղ էլ կատարվում է «Ջերմուկ» հանքային ջրի շշալցումն ու առաքումը: Վայոց ձորի մարզի քաղաքային բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության 28%, կանանց թվաքանակը գերազանցում է սղամարդկանց թվաքանակին:

Վայոցձորցիները սիրում են նշել ազգային, ավանդական և հոգևոր տոները՝ Ջատիկ, Տեառնընդառաջ, Վարդավառ: Վայոցձորցիների ամենասիրելի և յուրահատուկ տոնը Բերքի տոնն է, որը նշվում է ամեն տարի հոկտեմբերի երկորդ կիրակի օրը մարզկենտրոն Եղեգնաձորում: Յուրաքանչյուր գյուղ տոնական շքերթի է դուրս գալիս իրեն բնորոշ բարիքներով, տեղական հատապտուղներով և բույսերով զարդարված մեքենաներով: Գյուղացիները նաև ցուցադրում են թատերական պատկերներ գյուղի կենցաղից և ազգային խոհանոցից: Ամֆիթատրոնում տոնական համերգային ծրագիր է հնչում, իսկ հրապարակի շուրջը յուրաքանչյուր գյուղի ներկայացուցիչներ առանձին սաղավար-սեղանիկներով ներկայացնում են իրենց գյուղերի բերքն ու բարիքը: Ավանդական է դարձել նաև Գինու տոնը, որը նշվում է դարձյալ հոկտեմբերին Արենի գյուղում: Վայոցձորցին ունի ավանդական խոհանոց՝ ընդհանուր հայկական խոհանոցի դիմագծի վրա: Գյուղերում թխվում են ավանդական լավաշը, թոնրի գաթան: Հարգի են «բանջարները», որոնք բուժական նշանակության վայրի խոտաբույսեր են:

Սիրված ճաշատեսակներից են թթու բանջարը, կարշմը, քյալագոշը, դավուրմանով շորվան, նապաստակի քյուֆթան, կաքավի շորվան, տապակած լորը և ուլի խրովը: Վայոցձորցիները շատ հյուրասեր և աշխատասեր մարդիկ են:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզի տնտեսությունը ՀՀ տնտեսության թույլ օղակներից է: Առաջատար է գյուղատնտեսությունը, իսկ արդյունաբերությունը հիմնականում ներկայացված է գյուղմթերքների վերամշակմամբ: Գյուղատնտեսության մեջ առաջատար է անասնապահությունը հետևյալ

ենթաճյուղերով՝ խոշոր եղջերավոր, բրդատու ոչխարաբուծություն, այծաբուծություն, մեղվապահություն, թռչնաբուծություն: Բուսաբուծության մեջ աչքի են ընկնում խաղողագործությունն ու պտղաբուծությունը: Այստեղ աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, փշատի, սերկևիլի, սալորի, կեռասի, խաղողի բազմաթիվ տեսակներ, ընկույզ և հատապտուղներ: Արփայի հովտի ցածրադիր մասերում զբաղվում են բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, իսկ մարզի նախալեռնային գոտին համարվում է ՀՀ խաղողագործության 4 շրջաններից մեկը, որոնք հումք են հանդիսանում գինեգործության համար: Հայտնի է հատկապես «Արենի» տեսակի էնդեմիկ խաղողը, որից արտադրվում է «Արենի» գինին: Գինեգործությունն այստեղ ունի հազարամյա պատմություն:

Արդյունաբերական համալիրը լրացնում են նաև պանրագործությունը, հանքային ջրերի արտադրությունը և գինեգործությունը: Կան նաև մի քանի փոքր ջրաէլեկտրակայաններ, սարքաշինական գործարան՝ Եղեգնաձորում: Մարզի տնտեսության զարգացման մեջ մեծ դեր է կատարում առողջարանային տնտեսության ենթակառուցվածքների ընդարձակումը:

Արփի Բնակավայր

Արենի

Մակերես՝ 437.87կմ²

Բնակչություն՝ 11784

Համայնքի կենտրոն՝ Արենի բնակավայր

Համայնքի ղեկավար՝ Հուսիկ Սահակյան

Արենի համայնքը կազմավորվել է <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> ՀՀ օրենքում 2017 թվականի հունիսի 9-ին կատարված փոփոխության արդյունքում՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ագարակաձոր, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա և Ռինդ գյուղական համայնքների միավորումից և իր վարչական տարածքում ընդգրկում է Մոզրով գյուղական բնակավայրը:

Արենի համայնքում ընդգրկվել են հետևյալ բնակավայրերը՝

- [Ագարակաձոր](#)
- [Աղավնաձոր](#)
- [Արփի](#)
- [Գնիշիկ](#)
- [Ելփին](#)
- [Խաչիկ](#)
- [Չիվա](#)

○ Ռինդ

Արենի գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզում՝ Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում:

ՀՄՄԶ Գերագույն սովետի 10/9 1946թ. Հրամանագրով Արփան վերանվանվել է Արենի: Արենի բնակավայրը Երևանից հեռու է 110 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 20 կմ: Համայնքը ծովի մակարդակից բարձր է 980 մ: Բնակավայրի տարածքը հիմնականում ընկած է Արփա գետի հովտի լայնացած մասում և ավտոխճուղու երկարությամբ զարգանում է դեպի հյուսիս և արևելք: Գյուղի եզրերը աստիճանաբար բարձրացել են դեպի գետահովտի զառիթափ լանջերը: Էկոլոգիական վիճակի սրություն բնակավայրում չկա, քանի որ չկան արդյունաբերական վտանգավոր օբյեկտներ և արտադրական համալիրներ: 2011 թվականի դրությամբ համայնքն ունի 543 տնային տնտեսություն, 2006 բնակիչ: Գյուղը թաղված է թթաստանների և մրգատու այգիների մեջ: Տների ճնշող մեծամասնությունը տանիքավոր է և հարմարավետ :

Գյուղի կլիման ցամաքային է, բայց գետից հանված ջրով գրեթե ամբողջ հողատարածքը ոռոգվում է : Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, գարունը տաք է՝ երկարատև, խոնավ, ամառը շոգ, չոր ու երկարատև է: Գերակշռում են հաստատուն պարզ եղանակները, աշունը տաք է, օրերը՝ քիչ ամպամած:

Բնակչությունն զբաղված է այգեգործությամբ, դաշտավարությամբ, թռչնաբուծությամբ և անասնապահությամբ: Համայնքի զարգացման գերակա ուղղություններից է խաղողագործությունը և գինեգործությունը, ինչպես նաև զարգացող պտղաբուծությունը, որի շնորհիվ համայնքում համեմատականորեն բարձր է բնակչության զբաղվածությունը, որը էականորեն նպաստում է արտագաղթի կանխմանը: Արենի գյուղում գործում է 2 գինու գործարան, որտեղ արտադրվում է <<Արենի>> տեսակի հանրահայտ գինի:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, հիվանդանոց, մշակույթի տուն, գրադարան:

Արենին Վայոց ձորի հին և նշանավոր գյուղերից է, ճանապարհային հանգույց և Շարուրի դաշտավայրից Վայոց ձոր մտնող կիրճը փակող ռազմական կետ: Հնում Արենին գտնվել է այժմյան գյուղից կես կմ հյուսիս՝ բլրի վրա, որտեղ մինչ օրս կանգուն է Մոմիկ ճարտարապետի կողմից 1321 թ. կառուցված սուրբ Աստվածածին վեհաշուք եկեղեցին: Պահպանվել

են եռակամար կամուրջը (1265-

1287թթ.), սբ. Աստվածածին եկեղեցին

(1321թ.), 13դ. ամրոցը, մ.թ.ա. 2-րդ-1-ին

հզմ. կիլկուպյան ամրոցը և 10-16դդ.

խաչքարեր: Գյուղի տարածքում կան հնավայրեր, մի քանի ավերված գյուղատեղիներ, արձանագրություն ունեցող բազմաթիվ խաչքարեր ու գեղեցիկ քարայրներ՝ Մագիլի և Թռչունների քարանձավները:

Արենին ունի զբոսաշրջության մեծ պաշար՝ պատմամշակութային բազմաբնույթ բարձրարժեք հուշարձաններ: Համայնքի վարչական տարածքում է գտնվում միջազգային նշանակության հուշարձան Նորավանքի համալիրը: Բազմաթիվ են նաև բնության հուշարձանները՝ ժայռեր, ջրվեժներ, անդնդախորը ձորեր:

Գյուղի կենտրոնում արենցիները կանգնեցրել են հուշարձան-կոթող՝ Հայրենական Մեծ պատերազմում զոհված, և խաչքար՝ Արցախյան ազատամարտում զոհված համագյուղացիների հիշատակին:

Արենիի համայնքը էլեկտրաֆիկացված է, ապահովված է տրանսպորտային ցանցով, հեռախոսակապով, խմելու ջրի և ոռոգման ջրագծերով:

2004 թվականից ի վեր, հոկտեմբեր ամսին Արենի գյուղում կազմակերպվում է գինու փառատոն: Այն դարձել է ավանդական և ակնկալվում են հետևյալ արդյունքները՝ փառատոնը կնպաստի միջազգային զբոսաշրջային շուկայում

Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև ներքին շուկայում Արենի համայնքի, որպես բարենպաստ և գրավիչ զբոսաշրջավայրի նկարագրի ձևավորմանը, զբոսաշրջության զարգացմանը, այդ թվում՝ Վայոց ձորի մարզը որպես գինեգործության բնօրրանի և միջազգային գինու ճանապարհի կարևորագույն բաղկացուցիչ մասերից մեկի հանրահռչակմանը,

Արենիում և հարակից համայնքներում հայկական ավանդույթների և մշակույթի պահպանությանն ու տարածմանը, Հայաստանի տարածքային տնտեսական համաչափ զարգացմանը:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխատեսվում են շինարարության փուլում, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և կլինեն տեղայնացված՝ հիմնականում ընդգրկելով դպրոցի կառուցապատվող տարածքը: Բոլոր ազդեցությունները գնահատվում են կառավարելի՝ բնապահպանական միջոցառումների պլանում մշակված միջոցառումների արդյունավետ իրականացման դեպքում:

a. Շինարարության փուլ, ինչպես նաև քանդում

i. Օդային ավազանի աղտոտվածություն

Ծրագրի ընթացքում հիմնականում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Քանդման, բեռնման, կառուցապատման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

$$Q = K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_6 \times B \times G \times 10^6 / 3600, \text{ գ/վ}$$

որտեղ՝

K_1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K_2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աեռոզոլային մասնիկների, 0.02

K_3 –ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.8

K_4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K_5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K_6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 7 ամիս կամ

7 ամիս x 22 օր x 8 ժամ = 1232 ժամ/շինարարություն :

8 Հողային հանույթի ընդհանուր գանգվածը ներկայացվում է՝

1	2	3	4	5
		<u>Համաշինարարական աշխատանքներ 0.00 միջից գածո</u>		
1	E1- 1589	V-րդ կարգի ժայռագրունտի մշակում էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	մ ³	2818,9
2	C310-5	Ավելորդ գրունտի տեղափոխում մոտ 5կմ հեռավորության վրա	տ	5637,8
3	E1- 1589	V-րդ կարգի ժայռագրունտի մշակում էքսկավատորով կողիցք	մ ³	492,7
4	E1- 1545 11-9	III-րդ կարգի գրունտի քանդում 0.6 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողիցք	մ ³	1189,5
5	1-962 գ=1,2	Փոսորակի և խրամուղիների հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	մ ³	187,50
6	1-969	Գրունտի ետլիցք ձեռքով	մ ³	1869,7
7	1-1185 118- 11	Գրունտի տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	մ ³	1869,7

Հողային աշխատանքներ

8	Շուկա	ա/բ սղոցում	մ	27,0
9	E 1-991	ա/բ քանդում հետահար մուրձով շարժական կոնպրեսորից	մ ³	99,3
10	C310-5	Ավելորդ գրունտի տեղափոխում մոտ 5կմ հեռավորության վրա	տ	218,5
11	E 1-1589	Ա/բ քանդում էքսկավատորով, բարձելով ավտոհինքնաթափի վրա	մ ³	149,0
12	C310-5	Ավելորդ գրունտի տեղափոխում մոտ 5կմ հեռավորության վրա	տ	298,0
13	E 1-1589	2-րդ կարգի մշակում էքսկավատորով, բարձելով ավտոհինքնաթափի վրա	մ ³	1146,5

14	C310-1	2-րդ կարգի գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռավորության վրա	տ	1662,4
15	E 1-1589	V-րդ կարգի ժայռագրունտի մշակում էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	մ ³	4773,7
16	C310-5	Ավելորդ գրունտի տեղափոխում մոտ 5կմ հեռավորության վրա	տ	9547,4
17	E 1-1587 22-9	III-րդ կարգի գրունտի քանդում 0.6 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա	մ ³	9255,8
18	C310-5	Ավելորդ գրունտի տեղափոխում մոտ 5կմ հեռավորության վրա	տ	18048,8
19	E 1-1587 22-9	III-րդ կարգի գրունտի քանդում 0.6 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա /լցակույտի համար արևային վահանակներ/	մ ³	122,8
20	C310-1	3-րդ կարգի գրունտի տեղափոխում մինչև 1կմ հեռավորության վրա	տ	214,9

21	E1-1587 22-9	III-րդ կարգի գրունտի քանդում 0.6 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձելով ավտոինքնաթափի վրա /լցակույտի համար/	մ ³	933,9
22	C310-1	Գրունտի տեղափոխում լցակույտ մինչև 1կմ	տ	1634,3
23	E1-1545 11-9	III-րդ կարգի գրունտի քանդում 0.6 խմ շերտի տարողությամբ էքսկավատորով կողլիցք	մ ³	165,5
24	E1-1638 E1-1648	Լիցքի իրականացում	մ ³	1099,4
25	E1-1140	Լիցքի հարթեցում	մ ²	2824,0
26	E1-1150 E1-1156	Լիցքի խտացում պնեմատկոնով, 6 անցումով	մ ³	1099,4
27	E1-1186	Խտացված լիցքի ջրում	մ ³	1099,4
28	E1-555	Լիցքի շեփերի հարթեցում	մ ²	516,8

$$Q=(0.05 \times 0.02 \times 1.8 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 31.33 \times 10^6) / 3600 = 0.376 \text{գ/վ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

$$0.376\text{գ/վ} \times 704 \text{ ժ/շ} \times 3600 \text{ վ} / 10^6 = 0.95 \text{ տ}$$

Շինարարության և քանդման ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված և չեն դիսպերսվի դպրոցի սահմաններից դուրս՝ հաշվի առնելով մասնիկների մեծ չափերը և նրանց արագ գրավիմետրիկ նստեցումը: Հետևաբար, կանխատեսվում են, որ արտանետումները չեն գերազանցի թույլատրված նորմերը, իսկ հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կբացառվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ /տե՛ս Հավելված 1, ԲԿՊ, 5.1-Օդի աղտոտման և փոշու կառավարում/, մասնավորապես՝ շինարար կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակի ջրցանում, շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ և սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը):

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

ii. Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի մակարդակներ գնահատվում են շինարարության ընթացքում, աղմուկի հնարավոր մակարդակները չեն գերազանցի ՀՀ ազգային նորմերը: Աղմուկի մակարդակը կկառավարվի համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացմամբ Հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ:

Տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝

Ավտոտրանսպորտը և շինարարությունը

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է գյուղը, որը գտնվում է հայցվող տարածքից զգալի հեռավորության վրա:

Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ):

Տարածքում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LA_{էկվ} սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային

կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$$

Որտեղ՝

$LA_{էկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էկվ} = 79$ դԲԱ

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

$\Delta LA_{հեռ}$ 500մ-ի վրա կազմում է 28 դԲԱ

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով: $\Delta LA_{էկր} = 14$ դԲԱ

Կրթահամալիրի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ շտիպով,

$\Delta LA_{կանաչ} = 0$ դԲԱ
Աղմուկի մակարդակը սահմանափակված պայմաններում
գոտու սահմանին կկազմի՝ $LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 79 - 28 - 14 = 37$ դԲԱ

Հաշվի առնելով կրթահամալիրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45 դԲԱ/ շատ ցածր:

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում նկատվում է 32 դԲԱ (նորման 35 դԲԱ):

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ

ուշադրություն դարձնել դրանց ադմուկի մակարդակին:

- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
-Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում նախատեսվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն և 2024 թվականի փետրվար 12-ի թիվ 50-Ն հրամանների պահանջներով:
- բուժակ մանկաբարձական կետի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման 12-րդ հավելվածով, ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 03-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի մարտի 27-ի «Արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մանկաբարձական և գինեկոլոգիական կաբինետների և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մանկաբարձական և գինեկոլոգիական բաժանմունքների բժշկական միջամտություններով պայմանավորված վարակի կանխարգելում և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում և իրականացում» N 3.1.6.-011-09 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին N 03-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին» N 48-Ն հրամաններով:

iii. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական և քանդման աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինաշխատանքների կազմակերպման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Շինաշխատանքների և քանդման ընթացքում առաջացած հնարավոր փոշու մակարդակները կնվազեցվեն ջրցանի իրականացմամբ:

Շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ՝ բացառելով շինմեքենաների երթևեկության ընթացքում հնարավոր արտանետումները: Բացի այդ շինարարական և քանդման աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում՝ հաշվի առնելով դրանց բնույթը, աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները տարածքից:

Տիապային նախագծով նախատեսված է TOPAC-15 գործարանային արտադրության մաքրման կայան, որը տեղադրվելու է կրթահամալիրի հարավային գոտում ցանկապատով առանձնացված հատվածում, իսկ մաքրված ջրերը հեռացվելու են հարակից հատվածով անցնող ջրահեռացման առու:

Նախագծով նախատեսված է դրենաժային համակարգ, որի հավաքված ջրերը ուղղվելու են ջրերը հեռացվելու են հարակից հատվածով անցնող ջրահեռացման առու:

Կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են Հավելված 1.-ում:

iv. Թափոնների առաջացում և կառավարում

Շինարարական աղբի և քանդման արդյունքում առաջացած գրունտի կուտակումը կարող է հանգեցնել հողային համակարգի արտաքին շերտի աղբոտվածության: Նշված ազդեցություններից խուսափելու համար շինաղբը ժամանակավոր կուտակվելու է շինհրապարակում կանոնավոր կույտերի տեսքով՝ հատուկ հատկացված տեղերում, այնուհետև կանոնավոր կերպով (ամենաուշը երկու օրը մեկ) տեղափոխվելու համայնքային աղբավայր:

Ստորև ներկայացվում է՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱՐԵՆԻ ԿԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք,
 ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի 15 փ., 2 փկղ., 2. 6, Հեռ. 0281-6-00-01, areni.vayotszor@mta.gov.am
 N 3615-24
 14 նոյեմբեր 2024 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է առ այն, որ Արենի համայնքի Արփի բնակավայրի «Վահիկ Լևոնյանի» անվան միջնակարգ դպրոցի քանդման աշխատանքնարեից գոյացած ավելցուկային գրունտները և շինարարական աղբը նախատեսվում է տեղափոխել մինչև 5կմ հեռավորության վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում ռեյեֆի կտրման արդյունքում առաջացած հողարուսական ծածկույթը թույլատրվում է օգտագործել բարեկարգման ընթացքում սիզմարգերի և կանաչապատման տարածքների համար:

Կցվում է սխեման:

Տրվում է ներկայացնելու պահանջվող վայրը:



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Շինարարական և քանդման աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ դպրոցի տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են IV և III դասի վտանգավորության թափոնների առաջացում՝ ստորև ներկայացվող տեսակային կազմով.

Թափոնի անվանումը	Ծածկագիրը	Վտանգավորության դասը
շենքերի քանդումից առաջացած շին աղբ	91200601 01 00 4	IV
շինարարության փայտանյութի թափոններ	171205001004	IV
պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված սալիկներ	39901200 01 00 4	IV
ասֆալտի և ասալտբետոնի խառնուրդի մնացորդներ	31401200 01 00 4	IV
«Կնցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»	91200400 01 00 4	IV
«Սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ»	54101100 02 03 3	III
«Բանեցված շարժիչի յուղերի թափոններ»	54100201 02 03 3	III

Գործունեության ընթացքում գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 2601,46 տ :

Գործունեության ընթացքում գոյացած կենցաղային աղբը (գնահատվում է ≤ 3 կգ/օր) կհավաքվի հրապարակում տեղադրվող կենցաղային աղբի համար նախատեսվող փակ տարաներում և կանոնավոր կերպով կհեռացվի հասարակական աղբամաններ:

Շինարարության ողջ ընթացքում առաջացող յուղերի բանեցված մնացորդները (գնահատվում են ≤ 20 լ) կհավաքվեն և կպահվեն հերմետիկ փակ և մետաղական տարաներում, իսկ հետագայում կհանձնվեն վերջիններիս վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության: Հրապարակում քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաները, որոնք լիցքավորվում են օրվա պաշարով շինարարական կազմակերպության պահեստներից, կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային համակարգերի վրա հնարավոր աղտոտման ռիսկերը:

Բնապահպանական կառավարման պլանում նախատեսված գործողությունների շրջանակում կբացառվեն տարածքի կանաչ գոտիներում առկա բուսահողի վրա անուղղակի ազդեցությունները, ինչպիսիք են թափոնների տեղադրում, կեղտաջրերի հեռացում (տես Հավելված 1, 5.4 ենթագլուխ՝ Բուսահողի կառավարման միջոցառումներ):

v. Ազդեցություն բուսական աշխարհի վրա

Կանաչապատ գոտիներում նախատեսվում է իրականացնել նոր ծառաթփային բուսականության ստեղծում: Տնկման աշխատանքների համար կօգտագործվեն տեղական պայմաններին համապատասխանող և դպրոցամերձ տարածքներում կիրառելի ծառերի և թփերի տեսակներ:

Շինարարության ընթացքում տարածքում առկա բուսականության, մասնավորապես կանաչ գոտու պահպանության միջոցառումները ներառվել են ԲԿՊ-ում /տես Հավելված 1 ԲԿՊ, 5.3-Բուսականության պահպանում և կառավարում/:

Շինարարության և հետշինարարական փուլերում կիրականցվեն տարածքում տնկվող ծառերի և թփերի վիճակի մշտադիտարկում /վերահսկում ծրագրի պատվիրատուի՝ ՀՏԶՀ-ի կողմից, մշակված մոնիտորինգային ստուգաթեթիկին համաձայն, որի ձևաչափը ներկայացված է Հավելված 2-ում: Ծրագրի շրջանակում գործող հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է մեկ տարի, որի ընթացքում կպաշտպանվեն չապահովող ծառերը կփոխարինվեն նորերով: Նորատունկ կանաչ գոտու խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

vi. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Ծրագիրը մեծ անդրադարձ է կատարում հանրության անվտանգության և առողջության, ինչպես նաև շինարարական կազմակերպության աշխատողների անվտանգության և առողջության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի /տես Հավելված 1, ԲԿՊ, 2-Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան/: Հավելված 4-ում ներկայացվում է արտակարգ պատահարի հաշվետվության ձևը:

vii. Հողային համակարգերի վրա ազդեցություն և մեղմացման միջոցառումներ

Շինարարական աշխատանքների ընթացքում ազդեցության ենթակա հողաբուսաշերտը գնահատվում է 290ի.մ: Կիրականացվի վերջինիս մեկուսացում և պահպանում դպրոցի տարածքում՝ հետագայում կանաչապատման աշխատանքներում օգտագործման նպատակով: Ժամանակավոր պահպանումը կիրականացվի 2մ-ը չգերազանցող լայնակույտերի ձևով և պաստառներով ծածկված վիճակում՝ բացառելու համար փոշու տարածումը, հողմատարումը, մթնոլորտային երևույթների ազդեցությունը, շին աղբով աղտոտումը և այլ գործոններ: Բուսահողի պահպանումը կիրականացվի

շինարարական հրապարակի տարածքում, իսկ պահպանման առավելագույն ժամանակը չի գերազանցի 2 տարին (Հավելված ՀՀ կառավարության N 1404-Ն որոշման, 2 նոյեմբեր 2017թ.):

Հողային աշխատանքների ընթացքում առաջացած գրունտ, որը գնահատվում է հետագա օգտագործման համար ոչ պիտանի կտեղափոխվի և կթափոնակույտվի համայնքային աղբավայրում /համայնքի կողմից ներկայացված է տեղեկանքը/:

Հրապարակում քսայուղերը և հեղուկ վառելիքի տարաները կպահվեն հատուկ անթափանց (ավազե, մետաղական կամ բետոնե) հիմքերի վրա, ինչը կբացառի վերջիններիս արտահոսքով պայմանավորված հողային շերտերի հնարավոր աղտոտման ռիսկերը:

Նախատեսվող գործունեության ընթացքում մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողությունները հիմնականում կիրականցվեն մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը: Նշված ռիսկերի կառավարման միջոցառումները մանրամասն ներկայացված են Հավելված 1-ում (5 և 6 ենթաբաժին, Թափոնների կառավարում և արտակարգ իրավիճակների կառավարում):

viii. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական և քանդման աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- Հրդեհի առաջացում
- Հեղուկ նյութերի արտահոսք
- Աշխատողների վնասվածքներ
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարներ

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:
- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվելու են հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:
- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով,

անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան (ձևաչափը տես Հավելված 4), որը շինարար կապալառուն պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել: Բոլոր գրանցամատյանները կվերահսկվեն և կուսումնասիրվեն ՀՏՁՀ-ի կողմից բնապահապանական և սոցիալական մոնիտորինգային այցելությունների ընթացքում, անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն իրազեկության բարձրացման միջոցառումներ:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

- Շինարարության փուլում աշխատողները կօգտվեն գոյություն ունեցող դպրոցի զուգարաններից:

- Շինարարության և շահագործման ընթացքում նախատեսվում է ղեկավարվել ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն և 2024 թվականի փետրվար 12-ի թիվ 50-Ն հրամանների պահանջներով:

- Բուժակ մանկաբարձական կետի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշման 12-րդ հավելվածով, ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի ««Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 03-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի մարտի 27-ի «Արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մանկաբարձական և գինեկոլոգիական կաբինետների և հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների մանկաբարձական և գինեկոլոգիական բաժանմունքների բժշկական միջամտություններով պայմանավորված վարակի կանխարգելում և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում և իրականացում» N 3.1.6.-011-09 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին N 03-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները հաստատելու մասին» N 48-Ն հրամաններով:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկը, իսկ

առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

7 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, քանդում, շինարարություն և շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին: Ծրագրի համար մշակված ԲԿՊ ամբողջական ներկայացված է Հավելված 1-ում :

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները մեղմացնող և/կամ բացառող հիմնական բնապահպանական և աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումներն, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարարական աղբի և գրունտի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև հրապարակում կտեղադրվեն կենցաղային թափոնների համար նախատեսված աղբամաններ,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
